

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍԲԸ՝ ԱՍՎԱԾ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒԹՅ
ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՃՅՈՒՆԻ ԱՌՋԵՎ
(20 փետրվարի 2000 թ.)**

«Յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

*«Մահկանացու ծննալ,
անմահ զիւրն յիշատակ երող»*

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց:

Տոն է այսօր հայության, արդարության հաստատման թանկ օր: Անկախ Հայաստանի Հայրենի հողը որպես սուրբ մասունք իր նվիրական գիրկն է առնում Զորավար Անդրանիկի փարագիր աճյունը: Բոլոր փառք Աստուծո. ազաւր է Հայաստանը ընդունելու իր դուրսագուն հերոս զավակին, որի վերջին կամքն էր Հայրենիքում ամփոփել իր մարմինը, սակայն հանգրվան գրավ հեռավոր Փարիզում, քանզի Ազատության Մարտիկը՝ մահացած անգամ, սարսափով էր ազդում բռնապետություններին:

Արդարեւ, աշխարհում չկա մի հայ, որի սիրտը հուզմունքով չբրտփի և հպարտությունից չուռչի՝ արտաբերելով Զորավար Անդրանիկ նվիրական անունը: Դուրսագնաշունչ գորավարի և նրա զինակից երկրապահ ֆիդայիների հայրանի ու անհայր անուններով է բացվում 19-րդ դարի հայ ազաւրագրական պայքարի հուժկու նոր շրջանը՝ լի տասնամյակների անձնուրաց նվիրումով, գերմարդկային ջանքերով, զոհողություններով ու կորուստներով, լի արդարության հանդեպ անկեղծ հավատով և խորը հիասթափություններով: Շուրջ կեսդարյա հերոսապաւրում այդ ժամանակաշրջանը ավելի, քան նախընթաց մի քանի դարեր, հասունության անօրինակ դասեր մաւրուցեց մեր ժողովրդին՝ վերստին հավաստելով հայի ապրելու կամքը և մարտական ոգին, ազաւրության սերը և զոհաբերվելու կարողությունը:

«Ո՛վ Ազաւրություն դու սպառազեն, Տավրոս լեռներից մեզ երևեցար»: Ապավինած Մասնա քաջաց անպարտելի ոգուն, Զեյթունի, Տարոնի սեզ լեռներին ու թավ անտառներին, արդարության քենչով վառված Հայրենյաց պաշտպան ուխտյալները՝ ֆիդայի հայ քաջորդիք, առաջնորդեցին սրբազան ընդվզումը ընդդէմ Օսմանյան Թուրքիայի հայաջինջ բռնությունների՝ կերպելով հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերի ոգին և հերոսական այդ մարտերում կոփվելով որպես գորավարներ:

Սիրելի հայորդիք. մարտական երկար ուղի է անցել մեծ Հայդուկապետ ու Զորավար Անդրանիկը: Շապին-Գարահիսարցի սավառնաթև Արծվի թռիչքի բարձունքից

տեսանելի են Առաքելոց վանքի կոիվը, Մասունի հերոսամարտերը, Դիմանի ճակատամարտը... Նրա սխրալից, անանձնական կյանքի ճանապարհով կարելի է քայլ առ քայլ վերապրել հայ ժողովրդի 19-րդ դարավերջի և եղեռնասկիզբ 20-րդ դարի առաջին քսանամյակի անվիճելիորեն գրո հիշատակի արժանի պատմությունը՝ հարուստ հերոսական կերպարներով: Հայաստանի ազատագրման երազով ապրած քաջագունների հրեղեն կյանքով, ինչպես եղեգան փողից, ծնունդ առավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որի ժառանգորդն ենք այսօր՝ մեր Հայրենիքի ազապ ու անկախ փոքրիկ այս հողակտորի վրա:

Երանելի է դարձող, Զորավար, երախտագետ մեր ժողովրդի սիրո խնկարկումով, հաղթանակած հայ զինվորների թևերի վրա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարից Հայոց Հանրապետության ղեկավարության ուղեկցությամբ՝ գլխավորությամբ Հանրապետության նախագահի, Հայրապետիս և զինվորյալ միաբանությանն աղոթքով, հպարտ Եռագույնի ներքո ճանապարհվում ես դեպի բարձունքը անմահների, ուր հայրենաբաղձ, տնեցավառ հոգուդ հրճվանքով ընդառաջ են գալիս լույս հոգիները՝ բյուր զավակներիդ, որ նոր նահապարակներն են վասն Հայրենյաց, վասն հավատի՝ մարտի ելած նաև քո անվամբ, հայացքի առջև քո թանկ պարկերը՝ կրծքիդ շողացող Սուրբ Լուսավորչի շքանշանով:

«Գործս կիսապ մնաց» խոսքդ նոր արժևորմամբ ու հնչողությամբ վերաբին արձագանքում է հայ հոգիներում: Գործիդ շարունակման վկան է այսօրը, որով, խոսքիդ համաձայն, «հավատքով մխրճվում ենք դեպի ապագան»: Այսօր Զորավարիդ աճյունը չէ միայն, որ ամփոփում ենք հայրենի հողում, այլև կոթող ենք կանգնեցնում անթաղ ու անշիրիմ հայրենյաց պաշտպան բազում հայորդյաց՝ մեր երկրի սրբում ու մեր հոգիներում անթեղելով ձեր սերը առ Հայրենին, ազատարենք ոգին ու հավաքը հայոց գալիքի հանդեպ:

Հաղթապսակ սուրդ, սիրելի Զորավար, որ բազմիցս շողացել է ազատության ու արդարության հույսի ցուլերով, խաղաղ ու շինարար կյանքի երազի փայլով, քո ամուր ձեռքում դարձել է հրավեր ու կոչ հայոց միության, արարումի իր այս խորհրդով հայոց արևին է պարզվել այսօր երազ քո Հայրենիքում, Սուրբ Էջմիածնում, ուր 80 փարիներ առաջ պապյան դրեցիր ու այն հանձնեցիր լուսահոգի Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Թող շեղբը սրիդ խաղաղության անամպ կապույտը անդրադարձնի Մայր Հողին առմիշտ և հերկի հայոց հոգին սրելովագործ ու հողը պողաբեր՝ հայորդյաց մրաց ու ձեռքի արգասիքների արևագույնը բազմապատկելով հայրենի երկնքում: Թող լեռնանիստ մեր Հայրենիքի բարձր երկնքից Հույսի, Հավատի, Սիրո լույսերի արտացոլանքով կոչնականչ սուրդ միավորի հայ հոգիները ի սփյուռս աշխարհի:

Թող Զորավարիդ հոգնաբանք մարմինն ու անմահ հոգին հանգիստ գրնեն ազապ Հայրենիքի մեր սուրբ հողում, Մասյաց փեշերին հավերժախոս բազմած Սուրբ Էջմիածնի հայացքի առջև՝ Եռաբլուրի փառքի բարձունքին:

«Նունկ, աղօթք և բիր օրհնութիւն ի լուսեղէն յարկսն բնակեալ» քո հոգուն:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»: